ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔՐԴԵՐԸ

Քրդերը Առաջաւոր Ասիայի հին արիական ժողովուրդներից են։ Դարերի ընթացքում նրանք լայնօրէն տարածուել են Փոքր Ասիական (Անատոլիական) ու Իրանական բարձրավանդակներում եւ Հայկական լեռնաշխարհում։ Այսօր նրանք հիմնականում ապրում են Թուրքիայում, Իրանում, Իրաքում եւ Սիրիայում։ Քրդեր կան նաեւ ԽՍՀՄում։ Ըստ պաշտօնական տուեալների, նրանք բնակւում են Միջին Ասիայում, Անդրկովկասում եւ Հիւսիսային Կովկասում։ Հայաստանի եւ Վրաստանի Հանրապետութիւններում ապրում են եզդիներ, մասամբ նաեւ քրդեր։

Ադրբեջանում ետպատերազմեան ժամանակաշրջանում մինչեւ 1989 թ. մարդահամարը պաշտօնապէս քրդեր չկային։ Ըստ 1989 թ. մարդահամարի տուեալների, այնտեղ ապրում են մի քանի հազար քրդեր։ Բաւական 1992թ. լոյս պէտք է տեսնի քրդերէն լեզուով թերթ։ Յիշենք նաեւ, որ Արցախեան շարժման հետ կապուած լրատուական միջոցները սկսեցին նշել նաեւ քրդերին։ Վերջիններիս թիւը, ոչ պաշտօնական տուեալներով, Ադրբեջանում հասնում է 250-300 հազարի։

Ո՞րն է քրդերի թուի եւ բնակեցման տարածքի այդպիսի տատանումների պատճառը։ Զմոռանալով հարցի բարդութիւնը, այնուամենայնիւ որոշ տեղեկութիւններ տանք։

Ըստ Ռուսական կայսրութեան պետական գիւղացիների նկարագրութիւնների տուեալների, որոնք կատարւում էին 1806 թուականից սկսած, քրդերը բնակւում էին այսօրուայ Ադրբեջանական Հանրապետութեան գրեթէ ամբողջ արեւմտեան մասում։ Այդ են վկայում, մասնաւորապէս, 1838, 1859, 1873, 1885 թթ. դաշտային նկարագրութիւնները, ինչպէս նաեւ 1896 թ. եւ 1926թ. մարդահամարների տուեալները։ Հէնց 1926 թ.ից յետոյ քրդերը պաշտօնապէս վերացան Ադրբեջանի տարածքից։ Դա առաւել եւս տարօրինակ էր, քանի որ 1923 թ. Յուլիսին Ադրբեջանի Կենտգործկոմի յատուկ որոշմամբ ստեղծուեց Քուրդիստանի գաւառը՝ Լաչին կենտրոնով։ Այն ընդգրկում էր ժամանակակից Քելբաջարի, Լաչինի, Ղուբաթլիի եւ Զանգիլանի վարչական շրջանները, այսինքն՝ նախկին Ելիզաւետապոլի նահանգի Զանգեզուրի գաւառի մի մասը։ Քուրդստանի գաւառը ընդգրկելով Հազարու գետի աւազանը, սեպի ձեւով ընկած էր Զանգեզուրի եւ ԼՂԻՄի (այժմեան ԼՂՀ) միջեւ։ Այո՛, քրդերը վերջին առիթն էին, որ օգտագործուեցին Լեռնային Ղարաբաղը Հայաստանից անջատելու համար։ Ընդ որում, հայերին այն ժամանակ տրուեց ինքնավար մարզի կարգավիճակ, իսկ քրդերին՝ միայն մշակութային ինքնավարութիւն։ Եւ դա պատահական չէր։

Ըստ պետական գիւղացիների 1885 թ. նկարագրութիւնների տուեալների, Ելիզաւետպոլի նահանգում քրդական գիւղերը կազմում էին բոլոր գիւղերի 9,5 տոկոսը, առանձին գաւառներում ունենալով հետեւեալ պատկերը՝ 8 գիւղ Ջեւանշիրում, 59՝ Զանգեզուրում եւ մէկական Ջեբրաիլում եւ Արեշում։ Զանգեզուրի գաւառում քրդերը հիմնականում ապրում էին, ինչպէս արդէն ասուեց, Հազարու գետի աւազանում։ Նախիջեւանում քրդերը հայերի եւ ադրբեջանցիների հետ միասին ապրում էին Շարուրում, իսկ գաւառում կար Սուստ քրդական գիւղը (գտնւում է այժմեան Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան Բաբեկի շրջանում)։

Քրդերի մեծ մասը շիյա դաւանանքին էր պատկանում (մօտ 64 տոկոսը, մնացածները սունիներ էին)։ Արդէն 19րդ դարի վերջում նրանք հիմնականում խօսում էին թուրքերէն լեզուով, միայն որոշ գիւղերում օգտագործելով նաեւ քրդերէնը։ Չնայած այդպիսի ուժեղ լեզուական, կրօնական եւ կենցաղային ձուլմանը, քրդերը շարունակում էին իրենց համարել հուրդ ազգի ներկայացուցիչներ։ Իսկ նրանց թիւը շարունակում էր աճել։ Օրինակ, Ջեւանշիրի գաւառում 1873ից մինչեւ 1885 թ. նրանց թիւը աւելացաւ 67 ծխով եւ 740 մարդով, իսկ Զանգեզուրի գաւառում համապատասխանաբար 408 եւ 5854։

Հետեւաբար, Ադրբեջանի ազգագրական քարտեզից քրդերի տարօրինակ կորուստը ուներ նաեւ առարկայական պատճառներ։ Դրանք եւ՝ լեզուական ու մշակոյթա-կենցաղային ձուլումն էին, եւ՝ կրօնը, եւ՝ նրանց հաւատարմութիւնը բեկերին ու խաներին։ Պատահական չէ, որ Քուրդիստանի գաւառի վերացումը անցաւ համեմատաբար հանգիստ եւ ընդվզումներ չեղան։ Բացի այդ, 1923ից յետոյ ոչինչ չարուեց քրդերէն լեզուի զարգացման համար, իսկ «մշակութային ինքնավարութիւն» հասկացողութիւնը չգիտակցուեց բնակիչների բացարձակ մեծամասնութեան կողմից։ Դրա պատճառով հետագայում հալածանքների ենթարկուեցին միայն քրդերի կրթուած ու բարձր խաւերը, ինչպէս նաեւ նրանք, ովքեր ունէին խիստ արտայայտուած ազգային ինքնագիտակցութիւն։ Վերջինիս բացակայութեան պայմաններում քրդերի ձուլումը արագ ընթացաւ։

80ական թուականների վերջերից, սակայն, կրկին բարձրացուեց քրդական ինքնավարութեան հարցը։ Սակայն Քուրդիստանի ինքնավարութեան վերականգնումը դժուար եւ բարդ գործընթաց է։ Այն պէտք է ըստ երեւոյթին դիտել որպէս ամբողջ քրդական ազգային-ազատագրական պայքարի մի մասը։

ՎԻՏԱԼԻ ԽԱԼԱԹԵԱՆ